Մրցույթի հայտարարություն
«Երևանի Գր. Նարեկացու անվան հ. 137 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի
տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ Կառավարության՝ 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի (վերջին փոփոխությունը՝ կատարված 27.08.2021թ. ՀՀ Կառավարության թիվ 1380-Ն որոշմամբ) համաձայն՝ «Երևանի Գր. Նարեկացու անվան հ. 137 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝
   1) ՀՀ քաղաքացիությունը,
   2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):
2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝
   1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով,
   2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,
   3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը,
   4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով,
   5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերն ընդունվում են Երևանի Գր. Նարեկացու անվան հ. 137 հիմնական դպրոցում 2021 թվականի դեկտեմբերի 3-ից մինչև դեկտեմբերի 23-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև 15:00-ն՝ բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոն և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի հունվարի 10-ին՝ ժամը 14:00-ին, Երևանի Գր. Նարեկացու անվան հ.137 հիմնական դպրոցում / հասցե՝ ք. Երևան, Սողոմոն Տարոնցի 17/:
Հավակնորդների փաստաթղթերի ընդունման պատասխանատուներ՝ խորհրդի նախագահ Ա. Գրիգորյան և խորհրդի անդամ Ս. Միքայելյան: Տեղեկությունների համար դիմել՝ 010-48-66-00, 010-48-66-01, էլհասցե՝ narekaci137@yandex.ru, school137@schools.am: